ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ» (ՀՀԿ)
ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ք. Երևան Բաղրամյան 19 հեռ.՝ /+374/ 11 51-32-81, ֆաքս՝ /+374/ 10 52-54-12

ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմի
Ղեկավար-գլխավոր քարտուղար
Պրն. Արա Սաղաթելյանին

Հարգելի պարոն Սաղաթելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի 1-ին մասի, Ձեզ ենք ներկայացնում Խմբակցության առաջարկը ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» առաջին ընթերցմամբ ընդունված Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ (Կ-413-14.11.2018-ՊԻՄԻ-011/0) առաջարկությունը:

Խմբակցության որոշումը և առաջարկությունը կցվում են /առդիր՝ 3 էջ/:

Խմբակցության ղեկավար՝ **Վահրամ Բաղդասարյան**

ԱԺ ՀՀԿ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (Կ-413-14.11.2018-ՊԻՄԻ-011/0) ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և 81-րդ հոդվածի 2.1-րդ մասը՝ ՀՀ 6-րդ գումարման ԱԺ ՀՀԿ խմբակցությունը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ (Կ-413-14.11.2018-ՊԻՄԻ-011/0) ներկայացնել հետևյալ գրավոր առաջարկը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

«ՀՀԿ» խմբակցության ղեկավար՝

Վահրամ Բաղդասարյան

«ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Կ-413-14.11.2018-ՊԻՄԻ-011/0) ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 1. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7.6-ի հոդված 4-րդ մասը շարադրել հետևյալ կերպ՝ «Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված սպասարկումից այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց օգտվելու կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը»:

Հոդված 2. Սույն օրենքի հոդված 7.6-ում ավելացնել նոր 5-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝

5. Սույն հոդվածի 1-ին մասի 5)-րդ ենթակետով նախատեսված սպասարկումից այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից օգտվելու մասին տեղեկությունները հրապարակվում են օգտվելու փաստից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացում ՀՀ վարչապետի պաշտոնական ինտերնետային կայքում: Հրապարակումները պետք է պարունակեն տեղեկություններ օգտագործման նպատակի, օգտագործող անձանց ցանկի և պետական բյուջեից հատկացված գումարի չափի մասին:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվի առնելով վերջին շրջանում հանրության և զանգվածային լրատվամիջոցների հետաքրքրությունը և հասարակական քննարկումներն այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից վարչապետին տրամադրվող ինքնաթիռի և ուղղաթիռի օգտագործման շուրջ, նպատակահարմար ենք համարում ապահովել թափանցիկություն ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվող այս ծախսերի նկատմամբ: